2003թ. տարեկան հաշվետվություն

Խորհրդի 11-րդ նիստ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հերթական 11-րդ նիստը կազմակերպվել եւ անց է կացվել քարտուղարության կողմից 2003թ. մարտի 7-ին, հետեւյալ օրակարգով.

1. Ռոտացիոն կազմի հաստատման մասին
2.Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքային խմբի աշխատանքային ծրագիրը եւ կազմի հաստատման մասին,
3. «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին,
4. Հաղորդագրություն՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի շրջանակներում ստեղծված էլեկտրոնային էջի մասին:

Նիստի արդյունքում որոշվել է՝

1. Պարոն Մարկոսյանի առաջարկով որոշվեց օրակարգում ընդգրկել «այլ հարցեր» կետը, որը միաձայն ընդունվեց,
2. Ներկայացվեց խորհրդի անդամների ռոտացվող կազմը: Վարչապետը շնորհակալական խոսք հղեց ռոտացվող անդամներին նախկինում կատարած աշխատանքների համար, որից հետո խորհրդի ռոտացվող կազմը հավանության արժանացավ: Նշվեց նաեւ այն փաստը, որ նախատեսվում է ընդլայնել խորհրդի գործունեության շրջանակները՝ Տեղեկատվական տեխնոլոգիաներից ոլորտից բացի ներառելով նա–բարձր տեխնոլոգիաների ոլորտը:
3. Ներկայացվեց Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքային խմբի կազմը եւ գործունեության ծրագիրը: Ծրագրի վերաբերյալ առաջարկներ արվեցին: Հանձնարարվեց՝ Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների համագործակցության աշխատանքային խմբի ղեկավար ՝ Գ. Չուգասզյանին.

ա) հաշվի առնելով կատարված առաջարկները՝ համապատասխան աշխատանքային խմբում մեկ ամսվա ընթացքում քննարկել եւ խորհրդի հերթական նիստում ներկայացնել աշխատանքային խմբի գործունեության ծրագիրը:
բ) առաջարկվեց ընդլայնել աշխատանքային խմբի կազմը:

4. Քարտուղարությանը՝
ա) կազմակերպել «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումները համապատասխան աշխատանքային խմբում եւ ակումբի նիստում: Քննարկումներին մասնակից դարձնել ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչներին:
բ) 30 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանը ներկայացնել վերջնական կարծիքներն եւ առաջարկությունները:
գ) Կարճ ժամկետում ստեղծել ՏՏԶԱԽ էլեկտրոնային էջի հայերեն տարբերակը:
5. Պարոն Մարկոսյանի կողմից հարց բարձրացվեց ռադիո-մոդեմների օգտագործման համար 5 գհց հաճախականության տիրույթում տարածք հատկացնելու եւ ռադիո-մոդեմային հաճախականություններից օգտվելու սակագների վերաբերյալ: Հարցի առաջին մասի վերաբերյալ արտահայտվեց ՀՀ

տրանսպորտի եւ կապի նախարարության տեղեկատվայնացման վարչության պետը՝ Գ. Սաղյանը, որը ընդգծեց հարցի արդիությունը եւ ասաց, որ այդ ուղղությամբ աշխատանքներ են կատարվում: Հարցի երկրորդ մասով արտահայտվեց ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը՝ ասելով, որ ստեղծվում է սակագնային հանձնաժողով, որն իր մեջ կներգրավի տնտեսության բոլոր ոլորտներին վերաբերվող սակագները:
Հանձնարարվեց՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը.
Քննարկել եւ առաջարկություններ ներկայացնել ՏՏԶԱԽ առաջիկա նիստում «ռադիո-մոդեմների օգտագործման 5 գհց հաճախականության տիրույթի» վերաբերյալ:
6. Պարոն Չուգասզյանը առաջարկեց, ԱրմենՏելի տնօրենին ներկայացնել ընկերության զարգացման ծրագրերը: Ի պատասխան պարոն Վասիլակիսը ներկայացրեց ընկերության մոտեցումները:

Խորհրդի 12-րդ նիստ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի 12-րդ նիստը կայացավ 2003թ. հունիս 27-ին: Օրակարգում դրվել էին հետեւյալ հարցերը.

1. Տեղեկատվություն 11-րդ նիստի արձանագրության հանձնարարականների կատարման ընթացքի մասին,

2. Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների համակարգման աշխատանքային խմբի գործունեության ծրագրի հաստատում,

3. Տեղեկատվական Հասարակության Համաշխարհային Գագաթաժողովին (ՏՀՀԳ) Հայաստանի մասնակցության հարցը,

4. Ռադիոմոդեմների հաճախականության տրամադրման նոր մոտեցումների մասին,

5. Տեղեկանք ելույթ «Արմինկո» ՍՊԸ կողմից «Microsoft» ընկերության ծրագրային ապահովման մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման հավաստագրված կենտրոնի մասին:

Նիստի արյունքում՝

1. Տեղեկատվություն ներկայացվեց ՏՏԶԱԽ 11-րդ նիստի արձանագրության հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:
4ա կետի՝ Էլ-ստորագրության մասին օրենքը քննարկվել է համապատասխան աշխատանքային խմբում՝ ներգրավելով Արդարադատության նախարարության ներկայացուցիչներին, որից հետո այն անցել է միջազգային փորձագիտական քննություն եւ առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում կներկայացվի Արդարադատության նախարարություն:
Ըստ 4գ կետի հանձնարարականի այժմ գործում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի էլեկտրոնային էջի հայերեն եւ անգլերեն տարբերակները www.itdsc.am հասցեով:
2. Ներկայացվեց Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների համակարգման աշխատանքային խմբի գործունեության ծրագիրը, որը հաստատվեց խորհրդի կողմից:
Հանձնարարվեց աշխատանքային խմբի ղեկավարին համագործակցել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ խուսափելու համար գործառնությունների կրկնությունից:

3. Նշվեց, որ նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով ստեղծվել է կազմկոմիտե, որը նախապատրաստելու է սեմինար գագաթաժողովի վերաբերյալ: Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովին Հայաստանի բարձր մակարդակի մասնակցությունը ապահովելու համար առաջարկվեց Դոնոր եւ միջազգային կազմակերպությունների համակարգման աշխատանքային խմբի ղեկավարին համագործակցել ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ:

Հանձնարարվեց պրն. Ծուգարյանին ներկայացնել առաջարկ Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովին Հայաստանի մասնակցության կազմակերպչական աշխատանքների իրականացման եւ ՀՀ պատվիրակության կազմի վերաբերյալ:

4. Ռադիոմոդեմների հաճախականությունների վերաբերյալ ելույթ ունեցավ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության տեղեկատվայնացման վարչության պետ Գ. Սաղյանը: Նա տեղեկացրեց, որ տեղի է ունեցել հանդիպում շահագրգիռ կազմակերպությունների հետ եւ հանդիպման արդյունքում մշակվել են լուծումներ, որոնք կներկայացվեն կառավարությանը որոշման ընդունման համար: Պարոն Սաղյանը նշեց նաեւ, որ մոտակա ժամանակահատվածում կհաստատվեն ԱրմենՏելի կողմից ներկայացված տարանցիկ ծառայությունների սակագները:

Հանձնարարվեց հեռահաղորդակցության հարցերով աշխատանքային խմբի ղեկավարին համագործակցել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Տեղեկատվայնացման վարչության հետ եւ հետեւել ռադիոմոդեմների հետ կապված հարցի հետագա զարգացմանը՝ արդյունքների մասին տեղեկացնելով Խորհրդին:

5. «Արմինկո» ընկերության փոխտնօրեն Ի. Մարգարյանը ներկայացրեց ընկերության կողմից «Եվրասիա» հիմնադրամի հետ համատեղ իրականացված Microsoft ընկերության ծրագրային ապահովման մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման հավատարմագրված կենտրոնի ստեղծման մասին համառոտ տեղեկատվություն եւ առաջարկեց այդ ծրագիրը ընդգրկել ՏՀՏ Գլխավոր ռազմավարության մարդկային կապիտալի զարգացման վերաբերյալ բաժնում: Վերոհիշյալ ձեռնարկումն արժանացավ Խորհրդի հավանությանը:

Խորհրդի 13-րդ նիստ

Խորհրդի 13-րդ նիստը տեղի ունեցավ 2003թ. հոկտեմբերի 21-ին, նիստի օրակարգում ընդգրկվել էին հետեւյալ հարցերը՝

1. Ժնեւում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովի (ՏՀՀԳ) ընթացքի եւ դեկտեմբերին կայանալիք գագաթաժողովի մասին,
2. USAID կողմից առաջարկված Էլեկտրոնային կառավարության ծրագրի նախագծի վերաբերյալ,
3. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի գործունեությունը եւ կատարած ծրագրերը,
4. SiliconArmenia.com պորտալի եւ SS այլ նախաձեռնությունների մասին,
5. Այլ հարցեր:

Նիստի արդյունքում `

1. Օրակարգի առաջին կետի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացվեց Ժնեւում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովի (ՏՀՀԳ) նախապատրաստական հանդիպման ընթացքի մասին: Նշվեց 2003թ. դեկտեմբերին կայանալիք գագաթաժողովին ՀՀ Նախագահի կամ Վարչապետի գլխավորությամբ պատվիրակության մասնակցության անհրաժեշտության մասին: Քննարկվեց նաեւ հարակից միջոցառումներին մասնավոր եւ հասարակական սեկտորի մասնակցության անհրաժեշտության հարցը, առաջարկվեց բոլոր շահագրգիռ կազմակերպություններին դիմել քարտուղարություն՝ տեղեկատվության համար ինչպես գագաթաժողովի, այնպես էլ հարակից ցուցահանդեսների, ֆորումների եւ խորհրդաժողովների մասին:
2. Դ.Սանդուխչյանը ներկայացրեց USAID կողմից առաջարկված Էլեկտրոնային կառավարության ծրագրի նախագիծը: Շեշտվեց Էլ-կառավարության իրականացման համար որեւէ մարմնի, ինչպես նաեւ օրենսդրական հենքի ստեղծման անհրաժեշտությունը: ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանը հարց բարձրացրեց՝ արդյո՞ք Հայաստանում իրականացվող էլ-կառավարության ծրագրերը միմյանց հետ մրցակցող են, թե կարելի է դրանք համատեղել: «Էլ-Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Լեւոն Գալստյանը տեղեկացրեց, որ մինչ այդ նախագծի ստեղծումը իրենք բանակցել են USAID փորձագետների հետ եւ եկել են այն եզրակացության, որ դրանք միմյանց լրացնող աշխատանքներ են: Նրանց կողմից առաջարկված նախագծի որոշ մասեր արդեն իրականացվում են հիմնադրամի կողմից: Մասնավորապես, կատարվել է պետական կառավարման մարմինների եւ պետական ոլորտը ներկայացնող այլ կառույցների կողմից ստեղծված վեբ էջերի ուսումնասիրություն եւ էլ-կառավարության տեսանկյունից գնահատում:
3. Որոշվեց ի գիտություն ընդունել USAID կողմից առաջարկված նախագիծը, ինչպես նաեւ արագացնել եւ հստակեցնել էլ-կառավարության ծրագրի վերաբերյալ Կառավարության մոտեցումները:
4. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (ՁԻՀ) տնօրեն Բագրատ Ենգիբարյանը համառոտ ներկայացրեց ՏՀՏ ոլորտին վերաբերող որոշ վիճակագրական տվյալներ՝ հիմնված ՁԻՀ կատարած վերջին հետազոտությունների վրա: Նա ընդգծեց Հայաստանի՝ ՏՀՏ ուղղվածություն ունեցող տարբեր միջազգային ցուցահանդեսների մասնակցության արդյունքում ձեռք բերված հաջողությունները եւ առաջիկա միջոցառումներին հայաստանյան ձեռնարկությունների մասնակցության ծրագրերի մասին: Կարեւոր տեղ է հատկացվում ՏՀՏ ձեռնարկությունների ներկայացուցչությունների ստեղծմանը արտերկրում. մասնավորապես, բանակցություններ են վարվում Կանադայի, ԱՄՆ-ի եւ Գերմանիայի հետ:
5. Բ.Ենգիբարյանը տեղեկացրեց, որ ՁԻՀ գործունեության երկրորդ ուղղությունն է ունակությունների ձեւավորումը, որն իրականացվում է կարճաժամկետ ուսուցման եւ երկարաժամկետ՝ բուհական համակարգի հետ տարվող աշխատանքների միջոցով: Ծրագրի շրջանակներում ակտիվ աշխատանքներ են տարվում նոր կազմակերպությունների ձեւավորման ուղղությամբ, եւ, հավանաբար, 2004թ. հունվարից դրամաշնորհներ կտրամադրվեն ձեռնարկություններին: Վերջին ուղղությունը ենթակառուցվածքի՝ ՏՀՏ ձեռնարկությունների ինկուբատորի ստեղծումն է, որի շինարարական աշխատանքներն արդեն սկսվել են:
6. Համագործակցության երկու հուշագրերի շրջանակներում իրականացվող SiliconArmenia պորտալի ուժեղացման եւ SS սեմինարների կազմակերպման վերաբերյալ ներկայացվեց տեղեկատվություն: Մասնավորապես նշվեց, որ

համագործակցության պայմանագիր է ստորագրվել ԱՄՆ բարձր տեխնոլոգիաների հայկական խորհրդի, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Զարգացման հայկական գործակալության, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության, Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության եւ Էլեկտրոնային Հայաստան հիմնադրամի միջեւ: Այս պայամանագրի միջոցով ԱՄՆ բարձր տեխնոլոգիաների հայկական խորհուրդը ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հայաստանյան գրասենյակից 50000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ է ստացել:

7. SS ուսուցողական ծրագրերի կամ սեմինարների շարքը նույնպես իրականացվում է վերոնշյալ կազմակերպությունների համաձայնագրի շրջանակներում եւ ջանքերով, ինչպես նաեւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի տրամադրած 50.000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհով: Ծրագրի գործընկերներն արդեն իրականացնում են սեմինարների շարքը, որն ուղղված է SS ոլորտի մասնագետների կրթական եւ մասնագիտական ունակությունների զարգացմանը: